ՑՈՒԼԱԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

## ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հայաստանի 3-րդ Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև բազմաբնույթ հարաբերությունների համատեքստում մշտապես կարևորվել են տնտեսական առնչությունները, քանզի մեր նորանկախ պետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներից ամենաէականը, թերևս, եղել է տնտեսության վերակառուցումն ու աստիճանական ազատականացումը: Ի սկզբանե ֆրանսիական կողմը տնտեսական հարաբերությունների բնականոն զարգացման էական նախապայման է համարել տարածաշրջանում տևական խաղաղության և կայունության հաստատումը և հատկապես Հայաստանում հստակ, կայուն ու գործուն օրենքների ընդունման ու կիրառման անհրաժեշտությունը[1]:

Այդուհանդերձ, գոյություն են ունեցել երկկողմ տնտեսական ու առևտրական հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող մի շարք օբյեկտիվ պատճառներ, որոնցից գլխավորներն էին Հայաստանի նորանկախ պետության բարդ ու լարված իրավիճակը, տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը, Հայաստանի և Ֆրանսիայի աշխարհագրական հեռավորությունը, Թուրքիայի տարածքով տրանսպորտային ուղիղ կապի բացակայությունը, ինչպես նաև երկու երկրների տնտեսական ենթակառուցվածքների անհամապատասխանությունը:

Հայ-ֆրանսիական տնտեսական փոխգործակցության ուրվագծերը սաղմնավորվել են դեռևս նախքան ՀՀ անկախության միջազգային ճանաչումը: Դրա փաստացի վկայությունն է այն, որ մինչ Ֆրանսիայի կողմից Հայաստանի պետականության իրավաբանորեն ճանաչումը 1991թ. Հայաստանի

---

[1] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-Ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 2:

խորհրդարանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանի միջև Փարիզում կայացած հանդիպման ժամանակ խոսակցության հիմնական թեմաներից է եղել Հայաստանի տնտեսական բարեփոխումներում ֆրանսիական կողմի հնարավոր դերակատարումն էր: Ավելին, նախնական պայմանավորվածություն էր ձեռք բերվել Հայաստանի տնտեսության կայացման գործում ֆրանսիական օժանդակության հետևյալ ուղղությունների վերաբերյալ.

ա) օգնություն Հայաստանի էներգետիկ կարիքների համար,

բ) օգնություն ատոմակայանի վերագործարկման համար,

գ) վարկերի տրամադրում,

դ) ֆրանսիական ձեռնարկությունների՝ Հայաստան մուտքի խթանում[2]:

Հայ-ֆրանսիական միջպետական համագործակցության հիմքը դրվել է 1992թ. փետրվարի 24-ին՝ Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ: Մինչ այդ, 1991թ. դեկտեմբերի 23-ին Ֆրանսիան ճանաչել էր Հայաստանի անկախությունն ու ցանկություն հայտնել քաղաքական և տնտեսական սերտ կապեր հաստատել՝ հետագայում դրանք զարգացնելու ակնկալիքով[3]: Այդ առումով հիշարժան է 1992թ. ապրիլի 15-22-ը ՀՀ վարչապետ Գ. Հարությունյանի գլխավորությամբ կառավարական պատվիրակության այցը Ֆրանսիա, որի արդյունքում ֆրանսիական կողմը պատրաստակամություն հայտնեց մասնագիտական խումբ ուղարկել Հայաստան՝ տնտեսական կառույցների կազմակերպմանը և կայացմանը օգնելու համար: Որոշվեց ստեղծել համատեղ հանձնաժողով, որի նպատակը պետք է լիներ երկկողմ առևտրական համաձայնագրի մշակումը[4]: Այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հայ մասնագետների Ֆրանսիայում վերապատրաստում անցնելու վերաբերյալ, ինչպես նաև տեխնիկական աջակցության կազմակերպման ու գյուղատնտեսության բնագավառում տարբեր ծրագրերի վարկավորման մասին: Այցին հետևեց այն, որ 1992թ.

---

[2] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 326, ց. 9, գ. 35, թ. 34-37:

[3] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Դիվանագիտական բանբեր» թղթապանակ, թ. 41:

[4] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 326, ց. 9, գ. 35, թ. 17:

ապրիլի 28-ին Հայաստանը միացավ դեռևս 1989թ. դեկտեմբերի 18-ին Եվրամիության շրջանակներում ստորագրված տնտեսական համագործակցության համաձայնագրին[5]: Փաստորեն դրանով մեր երկրին հնարավորություն ընձեռվեց տնտեսության ոլորտում առավել բարենպաստության ռեժիմի պայմաններում ակտիվ տնտեսական գործունեություն ծավալել:

Տարեկան մոտավորապես 8 միլիարդ ֆրանկի համախառն ներքին արդյունք ունեցող Ֆրանսիան իր տնտեսական հզորությամբ աշխարհի հինգերորդ պետությունն է և չորրորդը՝ արտահանման ծավալով, իսկ նրա բնակչության կենսամակարդակը աշխարհում ամենաբարձրերից է[6]: Ունենալով սոցիալական և իրավական պետության ամենահին ավանդույթները Եվրոպայում և հենվելով տնտեսության կարգավորման գործում պետական նվազագույն միջամտության սկզբունքի վրա՝ Ֆրանսիան խառը կոչվող տնտեսական մոդելի դասական օրինակ է, ուր մասնավոր ձեռնարկությունները գոյակցում են պետական հզոր ընկերությունների կողքին:

Հարկ է նշել, որ Հայաստանի նկատմամբ Ֆրանսիայի հետաքրքրությունը պայմանավորված է եղել ոչ միայն դարավոր պատմամշակութային կապերի առկայությամբ, այլև մեր երկրի՝ որպես ֆրանսիական տարբեր ապրանքների ու ծառայությունների սպառման թեկուզև փոքր, սակայն կայուն և բարենպաստ շուկա լինելու հանգամանքով: Ֆրանսիացի մասնագետների ու գործարարների գնահատումներով Հայաստանի տնտեսական զարգացումը մեծապես պայմանավորված է եղել ոչ միայն բնական հարստությունների առկայությամբ, այլև փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորումով, ինչն էլ կարող էր խթանել մեր երկրում ֆրանսիական ուղղակի ներդրումները տնտեսության տարբեր ոլորտներում[7]:

Երկու երկրների միջև բազմակողմ, այդ թվում՝ տնտեսական հարաբերությունների զարգացման համար հզոր խթան հանդիսացավ 1993թ. մարտի 12-ին Փարիզում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և Ֆրանսիայի նախագահ

---

[5] «Ազգ», 1995, 30 մայիս, թ. 3:

[6] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 54:

[7] «Ավանգարդ», 1999, 2 օգոստոս, թ. 4:

Ֆ. Միտերանի կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Հանրապետության միջև փոխըմբռնման, բարեկամության և համագործակցության մասին» միջպետական պայմանագիրը[8]: ՀՀ Գերագույն Խորհուրդը այդ պայմանագիրը վավերացրել է 1993թ. սեպտեմբերի 27-ին, իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովն ու Սենատը համապատասխանաբար 1994թ. հունիսի 20-ին և հոկտեմբերի 14-ին: Պայմանագրում առանձին հոդվածով նախատեսվել է տնտեսության, արդյունաբերության, գիտության և տեխնիկայի բնագավառներում համագործակցության հաստատման երկկողմանի պարտավորություն: Երկու երկրներն ընդունել են տնտեսական գործակցության կարևորությունը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների հետագա հաջողության երաշխիք: Բացի այդ, երկու երկրները պարտավորվել են բարելավել մյուս կողմի ձեռնարկությունների գործունեության պայմանները սեփական տարածքում: Կողմերը պայմանավորվել են քաջալերել ուղղակի ներդրումները, համատեղ ձեռնարկությունների ստեղծումն ու տեխնիկական և գիտական փորձի փոխանակումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բնագավառի մասնագետների վերապատրաստումը[9]:

Միջպետական պայմանագրով համագործակցության գերակա ուղղություններ են ճանաչվել գյուղատնտեսությունը, սննդի արդյունաբերությունը, էներգետիկան, հեռահաղորդակցությունը, բնական պաշարների շահագործումը և տրանսպորտը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով իրենց իսկ փոխադարձ շահերը, երկու երկրները պատասխանատվություն են ստանձնել համագործակցել միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատությունների՝ մասնավորապես Զարգացման և Վերակառուցման Եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի ու Միջազգային Արժութային Հիմնադրամի շրջանակներում: Հանրագումարի բերելով վերոնշյալ պայմանագրի նշանակությունը՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը դրա ստորագրումը բնութագրել է որպես «Հայաստանի և Ֆրանսիայի միջև

---

[8] "Республика Армения", 1993, 16 марта, с.2:

[9] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, թ. 8:

հարաբերություններում շրջադարձային իրադարձություն, որը կոչված է նոր լիցք հաղորդելու երկու երկրների վաղեմի ավանդական հարաբերություն-ներին»[10]: Պայմանագիրը շատ կարևոր փաստաթուղթ էր և մնում էր, որ այն նյութական բովանդակություն ստանար:

Հիրավի, դժվար է գերագնահատել 1993թ. մարտի 12-ի միջպետական պայմանագրի դերը Հայաստանի Հանրապետության ու Ֆրանսիական Հանրապետության միջև բազմաբնույթ, այդ թվում նաև՝ փոխշահավետ տնտեսական հարաբերությունների հաստատման և հետագա զարգացման գործում: Այն մի կողմից արտահայտում էր երկկողմանի կամքն ու շահագրգռվածությունը տնտեսական սերտ համագործակցություն և փոխօգնություն հաստատելու կապակցությամբ, մյուս կողմից կոչված էր ծառայելու որպես կարևորագույն իրավական հիմք այդ հարաբերությունների հետագա անարգել ծավալման համար ինպես միջպետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկատիրական մակարդակով:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ Հայաստանի անկախ պետականության առաջին տարիներին հայ-ֆրանսիական տնտեսական փոխհարա-բերություններում գերակշռում էր Ֆրանսիայի՝ Հայաստանին ցուցաբերած մար-դասիրական օգնությունը: Ընդ որում, հաշվարկված է, որ եվրոպական հանրության կողմից Հայաստան ուղարկված օգնության 1/5-րդ մասը ֆինանսավորվել է Ֆրանսիայի կողմից[11]: Այդ օգնության կազմակերպման և Հայաստան առաքման գործում մեծ է եղել Ֆրանսիայում հայ համայնքի ակտիվ գործունեության ու նրա ներկայացուցիչների կողմից հիմնադրված բարեգործական կազմակերպությունների դերը: Հատկանշական է, որ Ֆրանսիայում հայ համայնքը համարվում է հաջողակ և ապահովված, սակայն մինչ այժմ համայնքի տնտեսական ներուժի վերաբերյալ ճշգրտված տվյալներ չկան: Ֆրանսահայերի մեծ մասը, հիմնականում բնակվելով երեք խոշոր քաղաք-կոնգլոմերատներում՝ Փարիզ, Լիոն և Մարսել, ապրում են անջատ և վարում ինքնուրույն, միմյանցից անկախ տնտեսական գործունեություն:

---

[10] «Հայաստանի Հանրապետություն», 1993, 16 մարտ, թ. 3:

[11] «Ազգ», 1994, 22 հուլիս, թ. 4:

Հաջողակ հայերի մի մասը խոշոր ձեռնարկատերեր են, որոնց թվում արժանահիշատակ են Սերժ Չուրուկը («Ալկատել»), ժան-ժակ Դամլամյանը («Ֆրանս Տելեկոմ»), ժակ Դեյրմենջյանը («Գազ դը Ֆրանս»), իսկ հիմնականում գերիշխում են միջին խավի ներկայացուցիչները՝ բժիշկներ, փաստաբաններ, մանկավարժներ, լրագրողներ, առևտրականներ և այլոք:

Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտում հայանպաստ գործունեություն ծավալած կազմակերպություններին, ապա դրանց թվում հիշատակելի են Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ), Հայ Աղքատախնամ Ընկերակցությունը (ՀԱԸ), Հայկական Միջազգային Միջմասնագիտական Խումբը (ՀՄՄԽ), Ֆրանսիայի «Հայաստան» հիմնադրամը և «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական կազմակերպությունը:

ՀԲԸՄ-ի Ֆրանսիայի մասնաճյուղը գործում է 1920-ական թվականներից և համարվում է Ֆրանսիայում գործող հայ ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկը[12]: Այն սերտ համագործակցություն է հաստատել Ֆրանսիայում Հայաստանի դեսպանության հետ և տարբեր բարեգործական համերգներից ստացված միջոցները տրամադրել է Ֆրանսիայում ՀՀ դեսպանատան կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորմանը:

1890թ. հիմնված ՀԱԸ-ն իր գործունեության ընթացքում մարդասիրական օգնություն է ցուցաբերել կարիքավորներին, հայկական դպրոցներին և կրթաթոշակներ է հատկացրել Ֆրանսիայում ուսումնառող ու այդ օգնության կարիքը զգացող հայ ուսանողներին: Այն նաև նպաստներ է հատկացրել Հայաստանի այն քաղաքացիներին, որոնք վերջին տարիներին տարբեր պատճառներով հայտնվել են Ֆրանսիայում:

ՀՄՄԽ-ն հիմնվել է 1981թ. և 1988թ. Երկրաշարժի ժամանակ մասնակցել մարդասիրական օգնության կազմակերպման ու աղետի գոտի առաքման գործունեությամբ, նախապատրաստել ու մշակել է երկարաժամկետ տնտեսական ծրագրեր: Ֆրանսիայի ԱԳՆ-ի պատվերով այն վարել է Գյումրիի ֆրանսիական դպրոցի շինարարական աշխատանքները, մասնակցել

---

[12] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 61:

Սպիտակի ավերված շենքերի վերականգնմանը: 1991թ. Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ ՀՄՄԽ-ը հիմնել է հայկական մենեջմենտի կենտրոնը (CEMA), որտեղ հայ մասնագետներին հնարավորություն է ընձեռվել գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերել շուկայական տնտեսության բնագավառի վերաբերյալ[13]:

«Ազնավուրը Հայաստանին» բարեգործական կազմակերպությունը ստեղծվել է 1988թ. Երկրաշարժից անմիջապես հետո: Հիմնական գործունեությունը ծավալել է հայաստանյան իր գրասենյակի միջոցով՝ նվիրատվություններ ու գումարներ հատկացնելով կարիքավոր ընտանիքներին, Հայաստանի դպրոցներին և մանկատներին: Բացի այդ, Հայաստանի շրջափակման դժվարագույն տարիներին կազմակերպության միջոցներով երեխաների սննդի արտադրության համար նախատեսված հոսքագծեր են տեղափոխվել Հայաստան և կազմակերպվել է դրանց գործունեության անխափան ընթացքը[14]:

Ֆրանսիայի «Հայաստան» Հիմնադրամը հիմնվել է 1993թ. ու հանդիսացել Հիմնադրամի համաշխարհային կառույցի ամենաակտիվ անդամներից մեկը: Մինչ այժմ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում Հիմնադրամի Ֆրանսիական մասնաճյուղն իրականացրել է ավելի քան 200 ծրագիր՝ 350 մլն ֆրանկ ընդհանուր արժողությամբ, այդ թվում կառուցվել է 2000 ընտանիքի համար բնակարան, 140 հազար անձ սպասարկող ջրի 7 խողովակաշար, 15 դպրոց, 4 կլինիկա, 200 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ և իրագործվել է ԼՂ-ի էլեկտրիֆիկացման ծրագիրը[15]:

Թվերի լեզվով խոսելու դեպքում հարկ կլիներ արձանագրել, որ 1993թ. Ֆրանսիա-Հայաստան ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 3 մլրդ 54 մլն դրամ, 1994թ.՝ 3 մլրդ 105 մլն դրամ (մոտավորապես 10 մլն դոլար): Միևնույն ժամանակ, 1994թ. Ֆրանսիայից Հայաստան ներմուծված 2 մլրդ 941 մլն դրամից 2 մլրդ 294 մլն-ը եղել է մարդասիրական օգնություն[16]:

---

[13] Նույն տեղում, թ. 65:

[14] «Հայաստան», 1991, 28 հունիսի, թ. 3:

[15] ՀՀ ԱԳՆ-ի՝ ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթապանակ, թ. 65-66:

[16] «Հայաստանի Հանրապետություն», 1993, 16 մարտ, թ. 3:

1994թ. փետրվարի 3-ին Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն դեպարտամենտի խորհրդի նախագահ Լ. Վեյգանի հրավերով Ֆրանսիա է այցելել ՀՀ կառավարական պատվիրակությունը՝ պետնախարար Ռ. Բագոյանի գլխավորությամբ, իսկ նույն տարվա փետրվարի 16-17-ը Ֆրանսիա է այցելել պետնախարար Ս. Թաշճյանը[17]: Այցի նպատակն էր Ֆրանսիայի պաշտոնական շրջանակներին ներկայացնել Մեծամորի ատոմակայանի վերագործարկման հարցում ՀՀ կառավարության դիրքորոշումը: Բանակցությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիական Հանրապետության կառավարությունների միջև կնքվեց ֆինանսական արձանագրություն, համաձայն որի՝ ֆրանսիական կողմը 40 մլն ֆրանկ ընդհանուր արժողությամբ վարկ տրամադրեց մեր կառավարությանը՝ Հայաստանի ատոմակայանի ռադիոակտիվ վառելիքի անվտանգ պահեստավորման նախագիծն իրականացնելու նպատակով Ֆրանսիայում սարքավորումներ գնելու և ծառայություններ ձեռք բերելու համար: Ընդ որում, վերոնշյալ վարկի 15,5 մլն ֆրանկ չափաբաժինը ձևակերպվեց իբրև նվիրատվություն ՀՀ կառավարությանը: Երկու երկրների կառավարությունների միջև կնքված մեկ այլ ֆինանսական արձանագրության համաձայն՝ ՀՀ կառավարությանը 4,5 մլն ֆրանկի չափով նվիրատվություն է հատկացվել, որը նպատակաուղղվել է օդային հաղորդակցությունների վերահսկողության պայմանների բարելավմանն ուղղված ծրագրի իրականացմանը[18]: Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ծրագիրը կյանքի կոչելու համար:

Փոխադարձ այցելությունների շրջանակներում 1994թ. մարտի 11-12-ը Հայաստան է այցելել Ֆրանսիայի կառավարական պատվիրակությունը՝ Փարիզի քաղաքապետի խորհրդական Ռ. Կազնավի գլխավորությամբ[19]: Այն մարդասիրական օգնություն (դեղորայք, սննդամթերք) բերեց Հայաստան:

1995թ. հունվարի 27-29-ը Հայաստան այցելած Ֆրանսիայի ԱԳՆ գլխավոր քարտուղար Դյուֆուրկի գլխավորած պատվիրակության ու ՀՀ պաշտոնատար անձանց հետ հանդիպումների և բանակցությունների արդյունքում Ֆրանսիայի և Հայաստանի կառավարությունների միջև ստորագրվեց

---

[17] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական փոխհարաբերություններ» թղթ. թ. 26:
[18] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, թ. 8:
[19] «Հայաստանի Հանրապետություն», 1994թ., 13 մարտ, թ. 2:

պարենային օգնության հատկացման վերաբերյալ համաձայնագիրը: Դրանով Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունը ՀՀ կառավարությանն է տրամադրել 4000տ պարենային ցորենի օգնություն, ընդ որում մատակարարումների համար համաձայնագրով որևէ փոխհատուցում չի նախատեսվել[20]:

Հայ-ֆրանսիական տնտեսական փոխշահավետ համագործակցության իրավապայմանագրային հենքը ամբողջացնելու նպատակով 1995թ. նոյեմբերի 4-ին ՀՀ և ՖՀ կառավարությունների միջև կնքվել է համաձայնագիր «Կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության վերաբերյալ»: Համաձայնագրում ամրագրվել է, որ յուրաքանչյուր կողմ իր տարածքում կատարած կապիտալ ներդրումների և դրանց հետ կապված գործունեության կապակցությամբ մյուս կողմի քաղաքացիների և ընկերությունների նկատմամբ պետք է ցուցաբերի ոչ պակաս բարյացակամ վերաբերմունք, քան իր երկրի քաղաքացիների և ընկերությունների հանդեպ: Այդ համաձայնագրում նախատեսվել է նաև, որ քաղաքացիների կամ ընկերությունների կողմից մյուս կողմի տարածքում կատարված կապիտալ ներդրումները պետք է լիովին և ամբողջապես օգտվեն պաշտպանությունից և անվտանգությունից համաձայնագրի սկզբունքներին համապատասխան [21]:

Դժվար է գերագնահատել նաև 1997թ. դեկտեմբերի 9-ին Փարիզում երկու երկրների կառավարությունների միջև կնքված «Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկային պարտավորություններից խուսափումն ու խարդախությունը կանխելու մասին» համաձայնագրի նշանակությունը[22]: Դրանով կանոնակարգվում էր հարկային պարտավորությունների տեսանկյունից տնտեսավարման կայունությունն ու շահավետությունը և պայմանավորում ՀՀ-ում ֆրանսիական ներդրումային քաղաքականության արդյունավետությունը:

Ըստ էության Հայաստանի ու Ֆրանսիայի միջև կնքված միջպետական պայմանագիրն ու վերոնշյալ համաձայնագրերը ձևավորեցին այն իրավական հենքը, որի հիման վրա երկու երկրները ծավալեցին արդյունավետ և փոխշահավետ տնտեսական հարաբերություններ գերակա ճանաչված բնագավառներում:

---

[20] ՀՀ ԱԳՆ-ի ընթ. արխիվ, «Հայ-ֆրանսիական պայմանագրեր» թղթապանակ, թ. 10:
[21] Նույն տեղում, թ. 6:
[22] Նույն տեղում, թ. 11: